ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՅՐ
SPECIAL TOPIC: FATHER

ՀԿ-ը ծանոթացնում է Աստծո՝ որպես Հայր մտերմիկ ընտանեկան փոխհարաբերությունը (տես՝ Հատուկ Թեմա. Աստծո Հայրությունը).

1. Իսրայելի ազգը հաճախ բնութագրվում է որպես ՅԱՀՎԵԻ «որդին» (տես՝ Ելս. 11:1, Մաղ. 3:17)
2. նույնիսկ ավելի շուտ՝ 2 Օրինաց գրքում, կիրառվում է Աստծո նմանությունը որպես Հայր (1:31)
3. 2 Օրինաց 32-ում Իսրայելը կոչվում է «նրա որդիները» և Աստված կոչվում է «քձեր հայրը»
4. այս նմանությունը սահմանվում է Սաղմ. 103:13-ում և զարգացում ապրում Սաղմ. 68:5-ում (որբերի հայրը)
5. այն բազմիցս կիրառվում է մարգարեներում (տես՝ Եսայի 1:2, 63:8, Իսրայելը որպես որդի, Աստված՝ Հայր, 63:16, 64:8, Երեմ. 3:4, 31:9):

Հիսուսը խոսում էր արամերեն, որը նշանակում էր, որ Աստվածաշնչում շատ տեղեր, որտեղ հայտնվում է «Հայր» խոսքը, այն հունարենի *Pater* տերմինն է, և արտահայտում է արամերենի *Abba*-ն (տես՝ Մարկ. 14:36): Այս մտերմիկ ընտանեկան տերմինը՝ «Հայրիկ» կամ «Պապա», արտահայտում է Հիսուսի մտերմությունը Հոր հետ: «Հայր» տերմինը ՀԿ-ում ՅԱՀՎԵԻ համար խնայողությամբ էր կիրառվում, սակայն Հիսուսը հաճախ և տարբեր տեղերում կիրառում է այն: Այն հանդիսանում է Աստծո հետ Քրիստոսի միջոցով հավատացյալների նոր փոխհարաբերրության կարևոր վկայություն (տես՝ Մատթեոս 6:9):